AWHHE

Armenian Women for Health
and Healthy Environment

«Քիմիական նյութերի միջազգային կառավարման ռազմավարական մոտեցում» գործընթացի իրականացումը Հայաստանում

«Երկիրը միակ մոլորակն է, որը հայտնի է մարդու կյանքի համար իր հարմարավետությամբ: Յուրաքանչյուրիս գոյատևումը, ինչպես նաև նրանց, ովքեր դեռ չեն ծնվել, կախված է համաշխարհային էկոհամակարգից: Սա փակ համակարգ է, և, եթե մենք փորձում ենք այն փսասել կամ ոչնչացնել, ապա սպառնում ենք ինքներս մեզ»:

Վերա Դրոննիկ

Սույն գրքույկի ստեղծումը նպատակ ունի բարձրացնել Հայաստանի ազգաբնակչության իրազեկվածությունը թունածին քիմիական նյութերի ազդեցության մասին, որը միջազգային, ազգային և տեղական մակարդակներում մտահոգություն պատճառող խնդիրներից է: Այն բաղկացուցիչ մաս է կազմում համընդհանուր քարոզարշավի, որը միտված է քաղաքացիական հասարակության կողմից բոլոր այն գործողություններին աջակցության դրսևորմանը, որոնք ուղղված են քիմիական նյութերի արտադրության, օգտագործման և կարգավորման ոլորտների բարեփոխմանը և նպատակ ունեն նվազագույնի հասցնել և վերացնել թունածին քիմիական նյութերի ազդեցության հետևանքով առաջացած վնասը:

2006 թ.-ին Դուբայում կառավարությունները և շահագրգիռ խմբերը ընդունեցին նոր գլոբալ քաղաքականությունը և ռազմավարությունը, որը ստացավ «Քիմիական նյութերի միջազգային կառավարման ռազմավարական մոտեցում» անվանումը (**ՔՆՄԿՌՄ**): Ռազմավարական մոտեցման նպատակն է փոխել քիմիական նյութերի արտադրության և օգտագործման եղանակները, որպեսզի նվազագույնի հասցվի մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա դրանց վնասակար ազդեցությունը:

ՔՆՄԿՌՄ-ն ընդունվել է կոնսենսուսով՝ քիմիական նյութերի կարգավորման վերաբերյալ միջազգային համաժողովի առաջին նստաշրջանի (**ՔՆԿՄՀ-1**) մասնակից բնապահպանության և առողջապահության նախարարների և ավելի քան հարյուր կառավարությունների պատվիրակների կողմից: Համաժողովը կազմակերպել էր ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիրը (**ՄԱՇՄԾ**)՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) և այլ միջազգային կազմակերպությունների ակտիվ աջակցությամբ, որոնք իրականացնում են քիմիական նյութերին առնչվող ծրագրեր:

AWHHE

Armenian Women for Health and Healthy Environment

saicm

ՔՆՄԿՌՄ գործընթացն իրավաբանորեն պարտադիր համաձայնագիր չէ: Այնուամենայնիվ, դա կառավարությունների և այլ կողմերի կողմից ընդունված համընդհանուր քաղաքական հանձնառություն է, որը ճանաչում է քիմիական նյութերի ազդեցության հետևանքով մարդկանց առողջությանը և շրջակա միջավայրին հասցվող վնասը և խոստանում է պատճառած վնասը նվազագույնի հասցնելու նպատակով արդյունավետ քայլեր ձեռնարկել քիմիական նյութերի արտադրության և օգտագործման եղանակները բարեփոխելու ուղղությամբ:

Ընդունելով **ՔՆՄԿՌՄ** գործընթացը, կառավարությունները և **ՔՆԿՄՀ**-ի այլ մասնակիցները համաձայնել են, որ առկա է բարելավված միջոցառումների անհրաժեշտություն՝ երեխաների, հղի կանանց, վերարտադրողական տարիքի մարդկանց, ծերերի, աղքատների, աշխատողների և այլ խոցելի խմբերի առողջության և շրջակա միջավայրի վրա քիմիական նյութերի վնասակար ազդեցությունների կանխման համար: Նրանք նշել են, որ քիմիական նյութերի կարգավորման գործում առկա է որոշակի առաջընթաց, սակայն միևնույն ժամանակ հայտարարել են, որ նման առաջընթացը համաշխարհային մակարդակում բավարար չէ, և որ շրջակա միջավայրը ողջ աշխարհում շարունակում է տառապել օդի, ջրի և հողի աղտոտվածությունից, ինչը բացասաբար է անդրադառնում միլիոնավոր մարդկանց առողջության և բարեկեցության վրա: Համաժողովն ընդունել է, որ քիմիական նյութերի համաշխարհային արտադրությունը, առևտուրը և օգտագործումն աճում են արագորեն, և համաձայնել են, որ նման իրավիճակը հատկապես լուրջ հետևանքներ է թողնում զարգացող երկրների և անցումային տնտեսությամբ երկրների վրա:

Բազելի, Ռոտերդամի և **Ստոկհոլմի** կոնվենցիաներն, այլ միջազգային քիմիական անվտանգության ծրագրերի հետ միասին, կառավարությունների և հասարակական կազմակերպությունների համար ստեղծել են կարևոր հիմք և հնարավորություններ՝ քիմիական անվտանգության կարևոր նպատակներին հետամուտ լինելու համար: Այնուամենայնիվ, այս համաձայնագրերից յուրաքանչյուրն ունի սահմանափակ ընդգրկվածություն, և դրանք բոլորը միասին չեն լուծում քիմիական անվտանգության բոլոր այն հարցերը, որոնց առերեսվում են երկրները: Դա հանգեցրեց քիմիական անվտանգության ավելի հետևողական և համապարփակ համաշխարհային ծրագրի անհրաժեշտության գիտակցման աճին, որն էլ սկիզբ դրեց ՔՆՄԿՌՄ-ի մշակմանը և ընդունմանը:

ՔՆՄԿՌՄ-ն միակ գլոբալ ֆորումն է, որը նույնականացնում, վերանայում և գնահատում է ինչպես հայտնի, այնպես էլ նոր բացահայտված առողջապահական և բնապահպանական խնդիրները՝ կապված քիմիական նյութերի կյանքի շրջափուլի հետ: ՔՆՄԿՌՄ-ն քննության է ենթարկում այն նյութերն ու հարցերը, որոնք ընդգրկված չեն քիմիական կոնվենցիաներում:

ՔՆՄԿՌՄ-ն ներառում է հետևյալ երեք հիմնական փաստաթղթերը՝

1. **Դուբայի հռչակագիրը**, որը ներկայացնում է ՔՆՄԿՌՄ-ի հանդեպ նախարարությունների, պատվիրակությունների ղեկավարների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և մասնավոր հատվածի ստանձնած պարտավորությունը,

2. **ընդհանուր քաղաքականության ռազմավարությունը**, որը սահմանում է ՔՆՄԿՌՄ - ի ընդգրկվածության շրջանակները,

3. **գործողությունների համընդհանուր ծրագիրը**, որը սահմանում է ռազմավարական մոտեցման իրականացման համար առաջարկվող «աշխատանքային ոլորտները և գործողությունները»:

ՔՆՄԿՌՄ-ն կարևոր գործոն է քիմիական անվտանգության և վերջինիս՝ կայուն զարգացման հետ կապի ապահովման ուղղությամբ միջոցառումների ձեռնարկման համար: ՔՆՄԿՌՄ-ի բացակայության պարագայում ոչ մի միջազգային կառույց ի վիճակի չի լինի լուծում տալ քիմիական անվտանգության ոլորտի առավել արդիական գլոբալ խնդիրների մեծամասնությանը: ՔՆՄԿՌՄ-ն առանձնահատուկ կարևորություն ունի զարգացող և անցումային տնտեսությամբ երկրների համար, որոնք ունեն շատ թույլ իրավական, կարգավորիչ, ինստիտուցիոնալ և տեխնիկական ենթակառուցվածքներ՝ մարդկանց և շրջակա միջավայրը թունածին քիմիական նյութերի և թափոնների պատճառած վնասներից պաշտպանելու համար: Ներկայումս զարգացող երկրներում քիմիական նյութերի արտադրության և գործածության ընդլայնման հետ մեկտեղ, աճում է ավելի ուժեղ ՔՆՄԿՌՄ ունենալու անհրաժեշտությունը, որը կկարողանա ձեռք բերել համապատասխան քաղաքական աջակցություն և համարժեք ռեսուրսներ:

Մտահոգության աճը չի սահմանափակվել միայն քիմիական վթարներով, արդյունաբերական աղտոտմամբ, թունաքիմիկատներով և շրջակա միջավայրի լայնամասշտաբ քիմիական աղտոտմամբ: Մտահոգությունը զգալիորեն ավելացել է՝ կապված նաև սպառողական ապրանքներում պարունակվող քիմիական նյութերի ազդեցության հետ: Այն փաստը, որ սպառողական ապրանքներում պարունակվող կապարը և սնդիկը կարող են վնասել մարդկանց, հատկապես՝ երեխաների առողջությանը, հայտնի է վաղուց: Համեմատաբար վերջերս գիտնականները և քաղաքացիական հասարակության ակտիվիստները մտահոգություն են հայտնել սպառողական ապրանքներում առկա մի շարք սինթետիկ օրգանական քիմիական նյութերի առնչությամբ:

Քաղաքացիական հասարակությունն իր անհանգստությունն է հայտնել մարդու առողջությանը **ֆտալատների** հասցրած վնասի առնչությամբ, որոնք լայնորեն օգտագործվում են որպես պլաստիկարարներ վինիլից պատրաստված արտադրանքներում՝ դրանց փափկություն և ճկունություն հաղորդելու նպատակով, ինչպես նաև որպես մի շարք կոսմետիկ արտադրանքների բաղադրիչ՝ հոտի կայունության ապահովման համար: Ապացուցված է, որ ֆտալատները կարող են առաջացնել էնդոկրին համակարգի խանգարումներ և հանգեցնել գիրության, շաքարախտի, անպտղության և նույնիսկ քաղցկեղի: Այս վտանգավոր նյութերի նկատմամբ հատկապես զգայուն են մանկահասակ երեխաները: Այդ իսկ պատճառով, շատ երկրներ՝ Եվրամիությունը, Միացյալ Նահանգները և նույնիսկ Չինաստանը, արգելել են ֆտալատների օգտագործումը խաղալիքների արտադրությունում:

Ֆտալատների օգտագործման արգելումը խաղալիքներում «Գրինփիս» կազմակերպության (Greenpeace) «Ազնիվ խաղալիքները» ծրագրի գլխավոր խնդիրներից մեկն է: «Գրինփիս»-ի ռուսաստանյան մասնաճյուղն իրականացրել է Մաքսային միության երկրներում, այդ թվում՝ Հայաստանում վաճառվող խաղալիքներում ֆտալատների որոշման վերաբերյալ ուսումնասիրություն: Խաղալիքների փորձանմուշները հետազոտվել են Միացյալ Թագավորությունում գտնվող «Գրինփիս»-ի գիտական կենտրոնում և Գերմանիայի Eurofins Consumer Product Testing լաբորատորիայում:

Բոլոր խաղալիքներում հայտնաբերվել են ֆտալատներ, ընդ որում՝ որոշ խաղալիքներում դրանց պարունակությունը 200-300 անգամ գերազանցել է եվրոպական չափանիշները: **Բնապահպանները Մաքսային միության երկրների ղեկավարություններին կոչ են անում արգելել առողջության համար այդքան վտանգավոր նյութերի օգտագործումը խաղալիքների արտադրությունում:**

Հանրության ուշադրության են արժանացել նաև բրոմացված քիմիկատները, որոնք օգտագործվում են որպես հակակրակային խառնուրդներ (անտիպիրեններ) պաստառագործական գործվածքների և պլաստիկ իրերի արտադրությունում:

Բիսֆենոլ Ա անվանումով քիմիական նյութը, որն օգտագործվում է պոլիկարբոնատային պլաստիկի արտադրությունում, նույնպես հայտնվել է հանրության տեսադաշտում: Քիմիական արդյունաբերության ջատագովները վճռականորեն պաշտպանում էին այս և խնդրահարույց այլ քիմիական նյութերի արտադրությունը: Այդուհանդերձ, իրականացված քարոզարշավների շնորհիվ քաղաքացիական հասարակությունը հաջողության հասավ նրանում, որ որոշ երկրներում այդ քիմիական նյութերի նկատմամբ մշակվեցին նորմատիվահիրավական ակտեր և սահմանափակումներ: Այնուամենայնիվ, նմանօրինակ քարոզարշավները շարունակվում են, քանի որ, չնայած իրավական ակտերի և սահմանափակումների առկայությանը, դրանք, ընդհանուր առմամբ, բավարար չեն խնդիրն ամբողջությամբ լուծելու համար:

Այսպես, օրինակ, քիմիական նյութերի կարգավորման վերաբերյալ համաժողովի 2-րդ նստաշրջանը կապարային ներկերը սահմանել է որպես քաղաքականության նոր խնդիր և նպաստել է գլոբալ բազմակողմ շահագրգիռ կողմերի գործընկերության՝ «Ներկերում կապարի վերացման հարցերով գլոբալ դաշինք»-ի (GAELP) ստեղծմանը, որն օգնում է երկրներին վերացնել կապարային ներկերն ազգային մակարդակում, որի վերաբերյալ նրանք հաշվետվություն են ներկայացնում քիմիական նյութերի կարգավորման վերաբերյալ համաժողովի հանդիպումների ժամանակ:

2016 թ.-ին «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» (ՀԿՀԱԱՇՄ) մասնակցել է ԿՕԱ-ների ոչնչացման միջազգային ցանց-ի (IPEN) «Կապարային ներկերի վերացում» նախաձեռնությանը՝ իր ներդրումը բերելով վաճառքում գտնվող կենցաղային օգտագործման ներկերի վերաբերյալ IPEN-ի իրականացրած համընդհանուր ուսումնասիրությանը: ՀԿՀԱԱՇՄ-ն ուսումնասիրել է ներկերի վաճառքը հայաստանյան շուկայում՝ այցելելով ներկերի վաճառքի 16 կետ, ներառյալ՝ ներկերի մասնագիտացված խանութներ և մասնավոր խանութներ: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հայկական շուկայում առկա են մեծ քանակությամբ ներկրված կենցաղային օգտագործման ներկեր: ՀԿՀԱԱՇՄ-ի ձեռք բերած ներկերի փորձանմուշների լաբորատոր հետազոտությունները ցույց են տվել, որ նմուշների 61,2% - ում կապարի պարունակությունը, կապարի սահմանային թույլատրելի խտության միջազգային չափանիշի (90 ppm) համեմատ, եղել է բարձր (http://awhhe.am/wp-content/uploads/2014/02/ipen-lead-armenia-summary-v1_2.pdf):

AWHHE

Armenian Women for Health and Healthy Environment

2016 թ.-ի սեպտեմբերի 14-ին ՀԿՀԱԱՇՄ-ն ծրագիրը ներկայացրել է «**Դեգրադացված շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության ազդեցությունը երեխաների առողջության վրա**» խորագրով սեմինարի ժամանակ: Միջոցառումը կազմակերպել էր ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակը, որին մասնակցում էին կառավարության, միջազգային կազմակերպությունների և Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Առողջությանը և շրջակա միջավայրին մեծ վնաս հասցնող քիմիական նյութերից են նաև թունաքիմիկատները: Դրանց պատճառած վնասը նույնպես առավել զգալի է ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներում, որտեղ բնակչության մեծ մասը զբաղվում է գյուղատնտեսությամբ կամ բնակվում է գյուղական վայրերում, որտեղ թունաքիմիկատներն օգտագործվում են ինտենսիվորեն և հաճախ՝ անվերահսկելի ձևով: Մտահոգություն պատճառող խնդիրներից է կարևոր և անհրաժեշտ տեղեկատվության հասանելիության սահմանափակությունը: Որոշ թունաքիմիկատներ, որոնց ազդող նյութերը կայուն են և օժտված են կենսակուտակման և հեռավոր տարածություններ տեղափոխվելու հատկանիշներով, արգելված են Ստոկհոլմի կոնվենցիայով: Օգտագործման համար թույլատրված մի շարք թունաքիմիկատներ դասվում են էնդոկրին քայքայիչների թվին և լուրջ վտանգ են ներկայացնում առողջության և շրջակա միջավայրի համար: Այնուամենայնիվ, թունաքիմիկատների մեծ մասը չի վերահսկվում որևէ համաշխարհային կոնվենցիայով: ԱՀԿ-ի տվյալներով, առկա տեղեկատվությունը չափազանց սահմանափակ է՝ առողջության վրա թունաքիմիկատների համընդհանուր ազդեցությունը գնահատելու համար, սակայն շատ հնարավոր է, որ թունաքիմիկատների ազդեցության հետևանքով մարդու առողջությանը հասցված վնասը շատ ավելի մեծ լինի, քան որևէ այլ քիմիական աղբյուրի պատճառած վնասը:

Ի պատասխան այս և այլ խնդիրների, քիմիական նյութերի կարգավորման վերաբերյալ համաժողովի 4-րդ նստաշրջանը (ՔՆԿՄՀ-4) ճանաչել է, որ չափազանց վտանգավոր թունաքիմիկատները կարող են վնասակար հետևանքներ թողնել մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա շատ երկրներում, հատկապես՝ ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներում: ՔՆՄԿՌՄ-ն միակ համաձայնագիրն է, որի շրջանակում կառավարությունները, միջկառավարական կազմակերպությունները և շահագրգիռ կողմերը կարող են համագործակցել՝ միասին այս խնդրին լուծում տալու համար:

ՔՆՄԿՌՄ-ի նպատակները

Ռազմավարական մոտեցման ընդհանուր նպատակն է հասնել քիմիական նյութերի արդյունավետ կառավարմանը դրանց կյանքի ողջ շրջափուլի ընթացքում, որպեսզի մինչև 2020 թ.-ը նվազագույնի հասցվեն քիմիական նյութերի օգտագործման և արտադրության պատճառած վնասները մարդու առողջության և շրջակա միջավայրի համար: ՔՆՄԿՌՄ –ի նպատակները խմբավորված են ըստ 5 թեմայի՝

- **ռիսկերի նվազեցում,**
- **գիտելիք և տեղեկատվություն,**
- **կառավարում,**
- **կարողությունների հզորացում և տեխնիկական համագործակցություն,**
- **անօրինական միջազգային շրջանառություն:**

Երեխաների առողջության վրա շրջակա միջավայրի ազդեցության հարցերը գնալով ավելի կարևոր են դառնում շատ ծնողների, առողջապահության մասնագետների և այլ շահագրգիռ անձանց համար: Բանն այն է, որ գիտնականները պարզել են, որ պտուղը, նորածիններն ու երեխաները հատկապես խոցելի են առողջապահական այն խնդիրների նկատմամբ, որոնք առաջանում են թունածին աղտոտիչների ազդեցության հետևանքով: Կանայք իրենց օրգանիզմի վրա կրած ազդեցությունը փոխանցում են իրենց երեխաներին դեռ մինչև նրանց ծնունդը: Երեխայի ծնվելուց հետո, կրծքով կերակրման միջոցով կանայք շարունակում են փոխանցել աղտոտիչներն իրենց երեխաներին: Ներարգանդային, ինչպես նաև նորածնի վրա ազդեցությունը կապված են ինչպես մանկական, այնպես էլ չափահաս տարիքում ծագած բազմաթիվ հիվանդությունների և խանգարումների հետ: Որոշ դեպքերում կանայք կարող են իրենց սննդակարգի փոփոխման միջոցով կրճատել իրենց և իրենց երեխաների օրգանիզմի վրա քիմիական նյութերի ազդեցությունը, սակայն այդպիսի պաշտպանությունը սահմանափակ է և ամբողջությամբ չի լուծում խնդիրը: Ելնելով վերը նշվածից, ՀԿՀԱԱԾՄ ՀԿ-ն միացավ քարոզարշավին՝ նպատակ ունենալով վերջ դնել աղտոտում առաջացնող գործելակերպերին:

ՔՆՄԿՌՄ-ի մասին Դուբայի հռչակագրում կառավարությունները խոստովանում են, որ առողջապահական հարցերով զբաղվող բնապահպանական ՀԿ-ները, արհեստակցական միությունները և այլ քաղաքացիական հասարակության կազմակերպություններ կարևոր ներդրում են ունեցել քիմիական անվտանգության խթանման գործում և հայտարարել են ՔՆՄԿՌՄ-ի իրականացման համար քաղաքացիական հասարակության հետ համագործակցելու իրենց մտադրության մասին: Սա օգնում է, որպեսզի քիմիական անվտանգության նպատակների աջակցության ուղղությամբ քաղաքացիական հասարակության գործունեությունը դառնա ավելի քիչ հակասական և ավելի նպատակային, քան այն ընկալվում էր նախկինում: Սա նաև դժվարացնում է աղտոտողների կողմից՝ խնդրի առկայության փաստը հերքելու հնարավորությունն այն երկրներում, որտեղ քաղաքացիական հասարակության ակտիվությունը երբեմն կարող է ռիսկային լինել: Կառավարությունների հետ համագործակցությունը թույլ է տալիս ՀԿ-ներին ներկայացնել իրենց աշխատանքը որպես ռազմավարական մոտեցման իրականացման ուղղությամբ իրենց երկրների կառավարությունների պետական քաղաքականության մաս և աշխատել 2020 թ.-ի նպատակի իրականացման համար:

Թեև քաղաքացիական հասարակության ակտիվությունը կարող է նպաստել ՔՆՄԿՌՄ-ի նպատակների իրականացմանը, այնուամենայնիվ, քիմիական նյութերի ազդեցությունից մարդու առողջության և շրջակա միջավայրի պաշտպանության պատասխանատվությունը դրված է կառավարության վրա: Անհրաժեշտ է, որպեսզի թունածին քիմիական նյութերի (ֆտալատներ, կապարը ներկերում, չափազանց վտանգավոր թունաքիմիկատներ, էնդոկրին քայքայիչներ) հետ կապված նոր ծագած խնդիրները ներառվեն ռազմավարական մոտեցման իրականացման ազգային օրակարգում:

Սա պահանջում է ազգային իրավական կարգավորման ռեժիմի ստեղծում, որը պետք է հիմնված լինի արդյունավետ ազգային և միջազգային քաղաքականության, օրենսդրության և իրավական կարգավորման վրա: Սա նաև պահանջում է իրավական կարգավորման համապատասխան ազգային ենթակառուցվածքի ստեղծում՝ բավարար քանակությամբ լաբորատորիաներով, վերապատրաստված անձնակազմով և ուղեցույցով՝ քիմիական նյութերի կարգավորման ոլորտում արդյունավետ մշտադիտարկում իրականացնելու և օրենքների ու ենթաօրենսդրական ակտերի կիրարկման համար:

Ընդունելով ՔՆՄԿՌՄ-ն, կառավարությունները եկան համաձայնության, որ քիմիական անվտանգության խթանումը պետք է դիտվի որպես ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) կարևոր բաղադրիչ: Ծրագիրը ՔՆՄԿՌՄ-ի իրականացումը կապում է հազարամյակի զարգացման նպատակների (ՀԶՆ) իրականացման հետ և մշակել է գործիք՝ քիմիական նյութերի արդյունավետ կարգավորումը ՀԶՆ-ների վրա հիմնված քաղաքականություններում և ծրագրերում ներառելու վերաբերյալ:

Տարիներ շարունակ ՀԿ-ները և քաղաքացիական հասարակության այլ կազմակերպություններ բոլոր մարզերում ակտիվորեն մասնակցել են քիմիական անվտանգության աջակցության քարոզարշավներին: Կառավարությունների և այլ շահագրգիռ խմբերի որոշումը ՔՆՄԿՌՄ-ի շուրջ բանակցություններ վարելու և այն ընդունելու վերաբերյալ կարող է մեծ չափով դիտվել որպես պատասխան համաշխարհային քաղաքացիական հասարակության ճնշումներին և պահանջներին:

ՔՆՄԿՌՄ-ի ընդունումը նպաստել է քաղաքացիական հասարակության հեղինակության բարելավմանը և վերջինիս ջանքերի հանդեպ վստահության ավելացմանը: Այն նաև նպաստել է քաղաքացիական հասարակության ջանքերի հետագա ընդլայնման և ամրապնդման համար պայմանների ստեղծմանը (http://awhhe.am/wp-content/uploads/2008/08/saicm.pdf):

ՀԿՀԱԱՇՄ ՀԿ-ն՝ որպես ՔՆՄԿՌՄ-ի հարցերով զբաղվող ազգային ՀԿ-ների համակարգող կազմակերպություն

ՀԿՀԱԱՇՄ ՀԿ-ն հիմնադրվել է 1999 թ.-ին հետևյալ առաքելությամբ՝ ուսումնասիրել Հայաստանում շրջակա միջավայրի աղտոտման խնդիրները, պաշտպանել մարդու՝ առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունքը, նպաստել մարդու առողջության վրա շրջակա միջավայրի ազդեցությունների հետ կապված ռիսկերի նվազեցմանը, խթանել առողջ ապրելակերպը՝ ուշադրության կենտրոնում պահելով կանանց և երեխաներին: Լինելով կանանց կազմակերպություն, ՀԿՀԱԱՇՄ-ն շահագրգռված է Հայաստանի կայուն զարգացման օրակարգում գենդերային հարցերի խթանման մեջ: ՀԿՀԱԱՇՄ-ն 1999 թ.-ից անդամակցում է IPEN-ին և Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի (ԱԵԿԿԱ) տարածաշրջանում քիմիական անվտանգության հարցերով զբաղվող ՀԿ-ների ցանցին, որի գործունեությունը համակարգում է IPEN-ի անդամ «Էկո-համաձայնություն» հասարակական կազմակերպությունը:

ՀԿՀԱԱՇՄ-ն ակտիվ գործունեություն է իրականացնում հետևյալ ոլորտներում՝ ա) քիմիական նյութեր, ներառյալ կոնվենցիաները (Ստոկհոլմի, Ռոտերդամի, Բազելի, Մինամատայի) և ՔՆՄԿՌՄ գործընթացը (քիմիական նյութերի օգտագործումը սպառողական արտադրանքներում, էնդոկրին համակարգի աշխատանքը խաթարող քիմիական նյութեր, կապարային ներկեր և այլն) և բ) կայուն համայնքային զարգացում (գյուղատնտեսություն, ջրամատակարարում և ջրահեռացում, կենսաբազմազանություն, թափոնների կառավարում, էներգիա և այլն):

Որպես ՔՆՄԿՌՄ-ի հարցերով զբաղվող ազգային ՀԿ-ների համակարգող կազմակերպություն, ՀԿՀԱԱՇՄ-ն ակտիվորեն ներգրավված է ՔՆՄԿՌՄ-ի գործընթացներում՝ ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում: Յուրաքանչյուր տարի ՀԿՀԱԱՇՄ-ն ներկայացնում է տեղեկատվություն ՀՀ բնապահպանության նախարարությանը (զեկույց ազգային համակարգող մարմնին) և ՔՆՄԿՌՄ քարտուղարությանը (մասնակցություն առցանց հարցմանը): ՀԿՀԱԱՇՄ-ն ակտիվորեն մասնակցում է քիմիական անվտանգությանը նվիրված տարբեր միջազգային միջոցառումների, այդ թվում՝ 2015 թ.-ի սեպտեմբերի 28-ից մինչև հոկտեմբերի 2-ը Ժնևում կայացած քիմիական նյութերի կարգավորման վերաբերյալ միջազգային համաժողովի չորրորդ նստաշրջանին (ՔՆԿՄՀ-4):

ՀԿՀԱԱՇՄ-ն ազգային ՀԿ-ների մեջ առաջիններից մեկն էր, որ Հայաստանում բարձրացրեց էնդոկրին համակարգի աշխատանքը խաթարող քիմիական նյութերի խնդիրն այն բանից հետո, երբ 2016 թ.-ին իրականացրեց կրծքի կաթի նմուշառում և փորձանմուշների հետազոտություններ, որոնց արդյունքում նմուշներում հայտնաբերվեցին քլորօրգանական թունաքիմիկատների (ԴԴՏ-ի և դրա մետաբոլիտների, ՀՔՑՀ-ի և դրա իզոմերների) մնացորդային քանակներ: Այն, որ առաջին անգամ կրծքի կաթում հայտնաբերվեց 2,4-Դ (դիքլորոֆենոքսիացետիկ թթու) (մինչև 0,02 մգ / կգ ճարպում), տագնապալի նշան էր: ՀԿՀԱԱՇՄ-ն իրականացրել է հայկական շուկա մուտք գործող թունաքիմիկատների ցանկում հնարավոր էնդոկրին քայքայիչներ համարվող թունաքիմիկատների նույնականացում: Արդյունքում, էնդոկրին քայքայիչների վերաբերյալ մշակվել են առաջարկություններ, որոնք ներկայացվել են ազգային որոշումներ կայացնողներին և այլ շահագրգիռ կողմերին: Իրականացված ծրագրերի արդյունքները լուսաբանվել են ազգային լրատվամիջոցներում: Ստեղծված տեղեկատվական նյութերի տարածումը թիրախային համայնքներում նպաստել է խոցելի գյուղական բնակչության ընդհանուր տեղեկացվածության բարձրացմանը:

ԱՍՀՀԵ

Armenian Women for Health and Healthy Environment

Որոշում կայացնողների հետ ձեռք է բերվել համաձայնություն՝ տվյալ խնդրի կարևորության և այն ՔՆՄԿՌՄ-ի ազգային օրակարգում ընդգրկելու անհրաժեշտության մասին: Հաշվի առնելով էնդոկրին քայքայիչների վերաբերյալ խնդրի բարդությունը և Հայաստանի առումով ոչ բավարար գիտական տվյալների առկայությունը, շատ կարևոր էր էնդոկրին քայքայիչների խնդիրը դիտարկել այնպիսի հստակ սահմանված համատեքստում, ինչպիսին թունաքիմիկատներն են: Էնդոկրին քայքայիչների վերաբերյալ երկխոսությունը կառավարության համապատասխան շահագրգիռ կողմերի և այլ գործակալությունների ու կազմակերպությունների հետ շարունակվում է:

Հայաստանում **թունաքիմիկատների ազդեցության** վերաբերյալ նախնական ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել են բարձր ռիսկային գործելակերպերի և ազդեցության սցենարների վերաբերյալ տվյալներ (ուշադրության կենտրոնում պահելով կանանց), որոնք օգտագործվել են ավելի բարձր ռիսկային համայնքներում տեղեկատվական քարոզարշավների իրականացման, իրազեկության բարձրացման, որոշումների կայացման կարգավորման գործընթացի ուժեղացման և թունաքիմիկատներով թունավորման դեպքերի ու պատճառների առավել խորը ուսումնասիրությանը նախապատրաստվելու համար: Քարոզարշավներն իրականացվել են չորս թիրախային մարզի (Տավուշ, Լոռի, Գեղարքունիք և Սյունիք) 20 գյուղում (http://www.pan-uk.org/projects/pan-uk-project-reducing-pesticide-risks-and-promoting-alternatives-in-the-former-soviet-union):

Իրականացված ծրագրերը նպաստել են քաղաքացիական հասարակության ներգրավմանը որոշումների կայացման գործընթացում՝ որպես Հայաստանում ՔՆՄԿՌՄ-ի արդյունավետ իրականացման նախապայման:

Ծրագրի անվանումը՝ Պաշտպանենք կանանց առողջությունն էնդոկրին քայքայիչների ազդեցությունից

Ծրագրի տևողությունը՝ 2015-2017 թթ.

Նպատակ 1. Էնդոկրին քայքայիչների վերաբերյալ տեղեկատվական-կրթական քարոզարշավի ընդլայնումն ազգային և տարածաշրջանային մակարդակներում՝ որպես ՔՆՄԿՌՄ գործընթացի մաս՝ IPEN-ի անդամ, ԱԵԿԿԱ տարածաշրջանում համակարգող կազմակերպության հետ համատեղ («Էկո-համաձայնություն» ՀԿ)

Արդյունքները

- *Իրականացվել է էնդոկրին քայքայիչների վերաբերյալ տեղեկատվական-կրթական քարոզարշավ ազգային և տարածաշրջանային մակարդակներում (միջազգային և ազգային միջոցառումներ, վեբ-կայքեր, ԱԵԿԿԱ տարածաշրջանային ցանց, ազգային աշխատանքային խումբ):*
- *Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատել է Ռոտերդամի կոնվենցիայով սահմանված չափազանց վտանգավոր թունաքիմիկատների ցանկը:*
- *Քիմիական նյութերի մասին ազգային օրենքը ներկայացվել է Ազգային ժողով՝ ընդունման համար:*
- *Տեղեկատվական նյութերը (էնդոկրին քայքայիչների վերաբերյալ IPEN-ի ուղեցույցը և գրքույկը) թարգմանվել են հայերեն լեզվով և տարածվել թիրախային համայնքներում:*
- *Էնդոկրին քայքայիչներ համարվող չափազանց վտանգավոր թունաքիմիկատների հարցի քննարկումը խրախուսվում է ազգային և ԱԵԿԿԱ տարածաշրջանային մակարդակներում՝ IPEN- ի ԱԵԿԿԱ տարածաշրջանային կենտրոնի միջոցով:*

Նպատակ 2. Խթանել քաղաքացիական հասարակության քննարկումները Հայաստանում և ԱԵԿԿԱ տարածաշրջանում կանանց առողջության վրա էնդոկրին քայքայիչների ազդեցության վերաբերյալ

Արդյունքները

- *Իրականացվել է հողի և գյուղմթերքների նմուշառում և փորձանմուշներում թունաքիմիկատների պարունակության որոշման հետազոտություններ, որոնց արդյունքները ներկայացվել են համապատասխան նախարարություններին և գերատեսչություններին:*
- *2017 թ.-ի մարտին կազմակերպվել է էնդոկրին քայքայիչների վերաբերյալ ազգային սեմինար:*
- *2017 թ.-ի սեպտեմբերին Երևանում կազմակերպվել է միջազգային սեմինար՝ նվիրված ԱԵԿԿԱ երկրներում քիմիական անվտանգության հարցերին:*

ԱԵԿԿԱ երկրներում IPEN-ի անդամ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների տարածաշրջանային հանդիպումը կայացել է 2017 թ.-ի սեպտեմբերի 28-29-ը: Հանդիպման նպատակն էր տեղեկացնել IPEN-ի անդամ կազմակերպությունների ներկայացուցիչներին ցանցի գործունեության ընթացիկ և նոր ուղղությունների և դրանցում ԱԵԿԿԱ տարածաշրջանի կազմակերպությունների մասնակցության մասին:

Հանդիպման ընթացքում ներկայացվել են 2017 թ.-ին քիմիական անվտանգության հարցերով տեղի ունեցած գլխավոր իրադարձությունների, ներառյալ՝ քիմիական երեք կոնվենցիաների կողմերի համաժողովի և ՔՆՄԿՌՄ-ի ապագայի վերաբերյալ առաջին միջնստաշրջանային հանդիպման արդյունքները: Հանդիպման մասնակիցները քննարկել են շրջակա միջավայրի հարցերով ՄԱԿ-ի վեհաժողովի երրորդ նստաշրջանի օրակարգային հարցերի արդիականությունը և ծրագրված միջոցառումները:

ՔՆՄԿՌՄ-ի համընդհանուր տեղեկատվական քարոզարշավի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը հասանելի է www.ipen.org/campaign կայքում:

GREENPEACE

Սույն տեղեկատվական գրքույկը ստեղծվել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի կողմից՝ «Գլոբալ կանաչ դրամաշնորհների հիմնադրամ»-ի (GGF) աջակցությամբ իրականացվող «Կարողությունների զարգացում՝ ի նպաստ Հայաստանում քիմիական անվտանգության» ծրագրի շրջանակում:

GLOBAL GREENGRANTS FUND

AWHHE